

Թանոս-Քրիստոնեայ Հայաստանը, Հայ Հեթանոսութիւնը ստորին էր Եազուհի աշգիւն քան Մագդեականութիւնը, զոր իբր ամենէն սաղ-գրոս կրօն մը հաստատելէ յետոյ անլուր հայածանը մը հանեց ոչ միայն քրիստոնէութեան դէմ, այլ մանաւանդ իւր պետական կրօնը հերձուածող աղանդներու դէմ: Եազուհի տարբերները իր ցուցնէն թէ վերջովն է նա հեթանոս Հայաստանի մէջ Քրիստոնէութեան կամաց կամաց տարած յաղթանակին հանդէպ. փոյթ շէր իրեն համար որ Հայաստանը քրիստոնեայ իր դաւանար, բայց իր սոսկաբար մի գուցէ խաչը Պարսկաստանի մէջ ալ փայլէր Կրօն-Նա-պէս: Եւ որչափ նա կամեցաւ արգելուլ, եւս քան զեւս անցին եւ բազմացան, եւ հասին մինչեւ յաշխարհն Բագնաց, եւ անտի ի հարաւակողմէ, մինչեւ ի Հնդկիս տարածեցաւ, (Երեմ. Գ.)։ Հայ հոգին վըպ արինով արմատացած էին Աւետարանի սերմերը, եւ Հայը արինով սկսած էին պաշտպանել եւ պիտի պաշտպանէին:

Հայ տըռուքի հեթանոսական բարբերը չկրցան Եազուհի գաղափարներուն զօրովից բլլալ: Արշակունի հիմնադրին ընթացքը բուռն բողոք մ'եղաւ: Հայք թէեւ կէս հեթանոս դուր գարուն, սակայն արտաքին թշնամիներու նկատմանբուն հանգէպ կարծես որոշեցին մճապէս փարիլ Աւետարանին: Գրան այս ձկուով հիմն եղաւ Ե՞ր գարու յաշխարհեան. եւ այնուհետեւ որչափ արտաքին բռնութիւններ տառակցան, այնչափ հաստատուն եւ տեղական նկարագիր մ'առաւ Քրիստոնէութիւնը Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ:

(ԱՅԷԸ)



ՄԻԹԵՐ ԳՕԹ ԳՕՆՈՍՏՆԵՐԳԻՐՔ ԵՆ ՀՆՈՍՏ

ՀԻՆ ՔՈՂՈՔՈՍԵՐԻՍԵՆ ԻՐԻՌՈՒՆՔԸ

(Ուսումնասիրութեան փորձ):

Հ Ա Տ Ո Ւ Ա Ե Ա Ռ Ա Ջ Ի Ն

Գ Լ Ո Ւ Ի Գ.

Հայոց Գաղափար-Գրքի ուղի-ընթերց:

IV.

(Երգան-խոսքան):

Բիւղադի-ն լըմ-ն: Արշակունիների անկումով Հայաստանն դառնում է փոխադարձ մրցման, կատաղի պայքարի մի սուպարեզ, ուր հանդէս էին եկել երկու խորոտ տերութիւններ՝ Պարսկաստանն ու Բիւզանդիոնը, իրենց գերիշխանութիւնն տարածելու: Այդ տարեւոր արինալի մրցումից յաղթող դուրս եկաւ Բիւ-

զանդիոնը, դէպի որը, ինչպէս արդէն առիթ ունեցանք վերը քաննից յիշելու, հայերը աւելի էին արամազուած յակելու, իբրեւ մի քրիստոնէական պետութիւնը, քան զեպ ի Պարսկաստանն իր հեթանոս կրօնով: Բիւզանդական ազդեցութիւնը, որ տակաւին շատ առաջ խոր արմատներ էր ձգել Հայաստանում, սկսեց այդ ժամանակ, խռնաշփոթ մի շըջանում, աւելի եւ աւելի ուժեղանալ: Այդ ազդեցութիւնն պահպանեց իր յոժն նաեւ այն ժամանակները, երբ Հայաստանը հենում էր Արարների գերիշխանութեան ներքոյ: Արարները, տիրելով Հայաստանին, բաւականանում էին Հայերի հպատակութեան լոկ արտաքին ձեւերով, որ կաշնում էր մի կողմից՝ հարկերի պարբերական վճարում ների եւ փւս կողմից՝ Բաղդադից նշանակած էմիրների, երկրի բարձր աշխարհական իշխանաւորների, իբրեւ խաղիքների ներկայացուցիչների ճանաչումով մէջ: Իսկ ժողովրդի ներքին հասարակական կեանքը ձուլում էր անձեռնմխելի ու ինքնավար, որ վերապահում էր բացառապէս հայ հոգեւորականութեանը. սա այժմ հանդիսանում էր Արարների առաջ ժողովրդական կեանքի իբրեւ միակ իրական ոյժը, միակ պաշտօնական գործող մարմինը:

Հենց այդ ժամանակները (է դար) Հայոց կաթողիկոս Յովհան Օձնեցու ձեռնարկութեամբ մի փորձ եղաւ հայկական նոր օրէնսգիրք կազմելու եւ այդ իր իշխանական իրաւասութեամբ հաստատելու հայ դատաստանական հիմնարկութիւնների կրթաութեան համար: Անտարակոյս, այդ Օրէնսգիրքը, որքան զաւարելի է եղականցնել մեզ հասած պատմական թերի տեղեկութիւններից եւ հասու կտոր ձեացորդներից, բաղկացած պիտի լինէր հայ եկեղեցական ժողովներում կայացած վճիռներից ու որոշումներից, հայ կաթողիկոսների ու հոգեւոր պետերի կարգադրութիւններից: Ուրեմն այդ Օրէնսգիրքն էլ, նման նախորդ կազմած հայ դատաստանագրքերի, բաղկացած էր բացառապէս կանոնական իրաւունքներից, որը, ինչպէս յայտնի է, վերաբերում էր նաեւ քաղաքացիական իրաւական երեւոյթներին եւ գործարարում էր իրականութեան մէջ հոգեւորական դասի ներկայացուցիչների ձեռքով: Այդ Օրէնսգիրքը մեզ չի հասել լիովին ու անարատ, այլ զանազան արտագործների ու հոգեւորականների ձեռքով միանգամայն խեղաթիւրուել ու տարրալուծուել է այն աստիճան, որ նա կորցրել է իր նշանակութիւնն իբրեւ իրաւաբանական նորմերի պատմական յի-

1 Զի Քրիստոնէութիւնն փաղոց տարածումն էր Պարսկաստանն և՛ դիւանար քաղաքները իր պայծառաստային եկեղեցիներով (Է. Գալթի. 886-9. պատմ. Բ. էջ 489—484):

չատակարան, իբրեւ իրաւունքի զարգացման աղբիւր :

Թ. Գրգոր երկրորդ կիսում Հայաստանում վերստին վերականգնում է քաղաքական անկախութիւնը, պետական կազմը Բագրատունիների տան թագաւորութեամբ Բագրատունիները հասնապազ գտնուում էին սերտ յարաբերութիւնների մէջ Բիւզանդիոնի հետ և որի գահակալները գիշատիչ աշխարհը հակում էին նոր Հայաստանի վերականգմանը, ժողովրդի քաղաքական վերածնութեանը եւ ամէն ճիգ էին թափում, ամէն միջոց գործադրում իրենց գեր-իշխանութեանը ենթարկել նորամիտ հայ թագաւորութիւնը։ Աստի զարմանալի չէ, որ Բիւզանդական կուլտուրան, յունական քաղաքակրթութիւնը մի նոր թափով սկսեց մուտք գործել Հայաստանում Բագրատունիների որով և ահա Բիւզանդական իրաւունքը լայն դռներով ներս է խաժուժ հայկական իրականութեան մէջ եւ ախրպետութեամբ մտնող իրաւաբանական աշխարհայեացքին և բոլոր դատավարական հիմնարկութիւններին Միայն այստեղ հարկ է շեշտել, որ այդ իրաւունքը ներկայացնում էր ոչ թէ հին իրաւնդական, այսինքն հռոմէական գասական իրաւունքը։ Յուստինիան կայսեր արձանագրած Corpus iuris civilisը, այլ յետագայ, աւելի նորագոյն կայսրների կազմած օրենսգրքերի իրաւունքը, իստրեան կայսրների Codexները (Theodosiana), Eclogabներ, Novellaները եւ այլն, որ իրաւունքը, որ ամբողջովին կորցրել էր նախկին հռոմէական իրաւունքի քաղաքացիական բնոյթը, զրկւել էր իր նախկին խիստ սխառմաստիկ ու մշակուած բովանդակութիւնից, այլասերուել էր եւ սոգոսութեւ ընդհանուր կանոնական իրաւունքի սկզբունքներով, Եկեղեցական հոգեւորական հերի գերակշռութեամբ։ Մեզ հասել են բաւական թուով այդ բիւզանդական օրենքների ժողովածուների հայկական ձեւագրերնու, որոնք ուրիշ ոչինչ են, եթէ ոչ յետ-յուստինիանական իրաւունքի եւ օրենսդրութեան հայկական բնկորները, որոնք հայ հոգեւոր դասի ձեռքով հաստատուել էին Հայաստանում Բագրատունիներից հարստութեան շրջանում։ Մի քանի հայ եւ օտար բանասերներ կարծիք են ցայտնում, որ յիշեալ յունական օրենքների ժողովածուները ու դատաստանագրքերը փոխադրուած են եղել հայերէնի Միսիթար Գօշից յետոյ, վասն զի վերջինս իր դատաստանագրքի մէջ ինչ մի բառով չէ յիշատակում այդ վերոյիշեալ նրա

նագրքերի հայերէն ձեւագրերի գոյութեան մասին։ Բայց չպէտք է մոռանալ, որ նոյն Միսիթար Գօշը ոչ մի բառով չէ յիշատակում նաեւ այլ օտար օրենսգրքերի մասին, որոնք հայերէն լեզուով արդեն կիրառութիւն ունեին Հայոց դատաստանական հիմնարկութիւններում։ Նախքան Միսիթար Գօշի դատաստանագրքի յորհունում, ինչպէս օրինակ ասորա-հռոմէական օրենսգրքերը, մովսէական օրենքների ժողովածուները Միսիթար Գօշը նոյն խնդրի մէջ ոչ բառ չէ ասում նաեւ հայ կանոնական օրենքների ժողովածուների մասին, որոնք անշուշտ գոյութիւն ունեին Հայաստանում, որպէս արդեն առիթ ունեցանք վերջ յիշատակելու, սակայն այն օրերից, երբ սկսեցին սեղի ունենալ հայ եկեղեցական ազգային ժողովները, որոնք մի շարք որոշումներ էին կայացնում ոչ միայն եկեղեցական իրաւունքի, այլ եւ շատ անգամ պատժական իրաւունքի, քաղաքացիական իրաւական յարաբերութիւնների վերաբերմամբ։ Դժուար է բացատրել Միսիթար Գօշի այդ անսակ լռութեան շարժառիթները, բայց եւ այնպէս չի կարելի ժխտել, որ նա, շնորհ իր կամոյցից օգնելով լռութեանը եւ վերոյիշեալ օտար օրենսգրքերի մասին ոչ մի բառով չի յիշատակելու, այնուամենայնիւ որոշ չափով օգտուել է նրանից։ Այդ օտար օրենսգրքերը, մանաւանդ բիւզանդական յետ-յուստինիանական իրաւունքն ու Հայոց կանոնական իրաւունքի նորմերը մեծ ազդեցութիւն են ունեցել «Հայոց դատաստանագրքի» հեղինակի վրայ, ծառայելով նրան իբրեւ հայկական իրաւունքի շէնքի աղբիւրներ։

Յամենայն գէպ բոլոր պատմական փաստերը մեզ հիմք են աւելն կարծելու, որ նախքան Միսիթար Գօշը եւ նախ քան նրա Հայոց դատաստանագրքի աշխարհ գալը Հայաստանում մեծ քանակով տարածուած էին զանազան օտար օրենսգրքեր, գլխաւորապէս Բիւզանդական իրաւունքից քաղուած, որոնք յայտնութեամբ կիրառուած էին հայ հոգեւորականութեան ձեռքով հայկական դատավարական հիմնարկութիւններում։ Այստեղ հիմնում ենք զարմանալի Միսիթար Գօշի խօսքերի վրայ։ Մեր հեղինակը քաջ նկատ իր դատաստանագրքի մէջ ցաւ և յայտնում էր Հայոցի, զուրկ լինելով ազգային օրենսգրքերից, զուտ հայկական դատաստանագրքերից ստիպուած են գիմնու միշտ օտար օրենքների ու դատաստանագրքերի։ Ուրեմն այսպիսից կարելի է ենթադրել, որ Հայաստանում տարաւտուած էին օտար օրենքների ժողովածուներ,

իրաւաբանական գեր չէին կարող խաղալ հայկական դրական իրաւունքի զարգացման պատճառով: Ահա այդ բոլորը գրեցինք Մի. Գօշին ձեռնարկելու մի լուրջ եւ պատասխանատու աշխատանք՝ Հայոց Գաղութան Գործերի մասին:

Ուրեմն Միխիթար Գօշը սկսելով իր մեծ գործը՝ ձեռնարկելով Հայոց Գաղութանագրքի յօդինումն, իր ձեռքի տակ ունէր հարուստ իրաւաբանական գրականութիւն, իրաւական բազմաթիւ հում նիւթեր՝ զանազան օրէնագրքեր ու դատաստանագրքեր, որոնք մինչեւ. այդ կիրաւուում էին հայկական իրականութեան, ժողովրդի իրաւական յարաբերութիւնների կարգաւորման մէջ:

Արդ, երբ որոշ չափով փորձեցինք ուսումնասիրել ու պարզաբանել հայկական իրաւունքի զարգացման ամբողջ ընթացքը մինչեւ Մի. Գօշի Գաղութանագրքի երեւան գալը, կարելի է պատասխանել այն հարցերին, որոնք առաջագրուած էին նախորդ գլուխներում. ի՞նչ աղբիւրներից էր Միխիթար Գօշը գլխաւորապէս օգտուել իր Գաղութանագրքը յօդինելիս եւ ի՞նչ չափով ու ծաւալով Մի. Գօշի յիշատակած աղբիւրները ազդեցութիւն են ունեցել Հայոց Գաղութանագրքի ընդմէջ եւ ընդհանուր ոգու վրայ:

V.

Միխիթար Գօշը իր Գաղութանագրքի նախագրութեան մէջ յիշատակելով այն աղբիւրները, որոնցից ինքը իբր թէ քաղել է զանազան օրէնքներ ու խմբագրել Հայոց Գաղութանագրքի համար, մեզ բնաւ չի բացատրում, թէ ի՞նչպէս ու ի՞նչ ծաւալով է օգտուել նա իր անարկած աղբիւրներից եւ երբեմն միայն բաւականանում է նրանով, որ Գաղութանագրքի այդ կամ այն առանձին յօդուածների մէջ մասնաւոր չէ անում անցողակի, թէ ի՞նչ աղբիւրից է օգտուել այդ օրէնքը յօդինելիս: Ուստի անհրաժեշտ է այստեղ ընդհանուր գծերով այն աղբիւրների տեսութիւնն անել, որոնք իսկապէս Հայոց Գաղութանագրքի հիմ են կազմում եւ լուսաբանել, թէ այդ աղբիւրները ի՞նչ չափով ազդել են ու նիւթ տուել մեր Գաղութանագրքի իրաւաբանական բովանդակութեանը. վերջապէս բացատրել, թէ այդ աղբիւրները ի՞նչ առնչութիւն ունին այն աղբիւրների հետ, որոնց անարկում է Մի. Գօշը Գաղութանագրքի

նախագրութեան ծրարում: Այդ աղբիւրները այստեղ կը լուսաբանենք ընդհանուր գծերով, թողնելով Գաղութանագրքի զանազան իրաւական առանձին նորմերի յատուկ աղբիւրների տեսութիւնը կատարել այն ժամանակ, երբ կը վերլուծենք Հայոց Գաղութանագրքի քաղաքացիական իրաւունքը, երբ կը փորձենք վերականգնեցնելու հայ քաղաքացիական իրաւունքի ամբողջ սխտեմը: Այդ ուղղութեամբ գնալով, կը նկատենք, որ Մի. Գօշի Գաղութանագրքի իրաւաբանական բոլոր աղբիւրները իրենց բնաւորութեամբ գաղաւորուած են հետեւեալ ստորեւ առաջագրած բաժինների:

1. Միջերկրական իրաւունքը, ինչպէս կարող է եզրակացնել Հայոց Գաղութանագրքի իւրաքանչիւր ուսումնասիրողը, Միխիթար Գօշը իր աղբիւրների մէջ ուղղակի չի յիշատակում, թէ օգտուել է հայերի սովորութեան իրաւունքից, ժողովրդի մէջ տիրապետող բարքերից, որոնք իրաւական նորմերի բնաւորութիւն էին կրում: Երբեք Հայոց Գաղութանագրքի արտաքին բովանդակութիւնից, առաջին հայեացքից այնպիսի սպաւորութիւն ենք ստանում, որ նրա մէջ բնաւ տեղ չեն գտել սովորութեան իրաւունքի նորմերը: Նոյն իսկ այն. փաստը որ ինչպէս խտտովանում է Մի. Գօշը իր նախագրութեան մէջ, թէ Հայոց Գաղութանագրքի յօդինման շարժառիթներից մէկն գրաւոր օրէնքների բացակայութիւնն էր, որոնք, ընդհանուր առկն բնաւոր ձեւով կիրաւուելով ժողովրդական աւերայ կենտրոնում, պատճառ էին դառնում սխալ ու անարդար դատաստանի ու զանազան անհամոք նախաւորների, այնուամենայնիւ ինչ ինչ հանգամանքներով նա չի մոյրել իր Գաղութանագրքի մէջ սովորութեան իրաւունքի գործող կարգերը, ընդհանրացած նորմերը: Այդ երեւոյթը պէտք է բացատրել նրանով, որ երբեք Մի. Գօշի կարծիքով Հայերի մէջ գործող սովորութեան իրաւունքի նորմերը, իբրեւ գարեբով գոյութիւն ունեցող եւ սերունդէ սերունդ անցնող, հետեւապէս եւ ժողովրդի իրաւաբանական աշխարհայեացքի մէջ հիմնովին արմատացած, կարող էին առանց գրի անցկացնելու եւ Օրէնագրքի մէջ առանց ներմուծելու էլ պահպանել իրենց յարատեւութիւնն ու պարզ իմաստութիւնը մինչգեւ օտար ազգութիւններից ստացած եւ իւրացրած օրէնքներն ու իրաւաբանական որոշումները կարող էին թերի կերպով ըմբռնուիլ ու հասկացուիլ, անբաւարար

գնահատուիլ: Թե Մխ. Գօշը միանգամայն ունեւորդ էր գտնում այդ վերոյիշեալ պատճառով իր Գաղտաստանագրքի մէջ մտնել գործող սովորութեան իրաւունքի նորմերը, որպէս ամէնքի համար պարզ ու յայտնի իրաւաբանական կարգեր, հետեւում է նաեւ մի այլ փաստից: Մեր հեղինակը քանիցս շեշտում է իր Գաղտաստանագրքի գնահատան տեղերում, որ գաղաւթները որեւէ իրաւաբանական կասկածելի վերինքի գէպերում, նաեւ այն գէպերում, երբ Գաղտաստանագրքի յօդուածներում բացակայում են որոշ իրաւաբանական նախաւոր օրինակների (précédent) վերաբերեալ յատուկ նորմեր, համեմատ օրէնքներ, ղեկավարուել է հարկաւոր միմայն տեղական սովորութեան իրաւունքով. «Բայց որ ինչ արժան է իրաւամբ տեսնել գաղտաւորը ըստ պատահմանն եւ ըստ սովորութեան գաւառիկի»:

Սակայն որովհէտ այլ եզրակացութեան ենք յանգում, երբ մի փոքր խորազնին վերլուծենք Գաղտաստանագրքի իրաւաբանական բովանդակութիւնը: Մենք տեսնում ենք, որ Հայոց Գաղտաստանագրքի յօդուածների որոշ մասերի իրաւաբանական բովանդակութեան վրայ մեծ ազդեցութիւն է թողել տեղական սովորութեան իրաւունքը: Միեւնում Գօշը հակառակ էր պահպանած լուծեանը, այնուամենայնիւ շատ տեղերում ստիպուած է եղել օգտուել տիրապետող իրաւաբանական սովորութեան, որոնք նրան ծառայել են որպէս անմիջական աղբիւրներ իր Գաղտաստանագրքի կազմելուն: Այլապէս չէր էլ կարող լինել ժողովրդական կեանքի մէջ շատ իրաւորանական — իրաւունքային երեւոյթներն ու հասարակական յարաբերութիւնները հիկար ու ձիգ դարերով անուել ու կրթուել էին սովորութեան իրաւունքի աշխարհայեացքով, կարգաւորուել էին այդ իրաւունքի նորմերով: Աւստի անտես անել այդ գրական գործող իրաւունքը եւ ներմտնել նոր, միանգամայն խորթ ու անհամապատասխան իրաւաբանական կարգեր, միանգամայն անկարելի էր: Մանաւանդ խիստ ցայտուն կերպով աչքի է զարնում սովորութեան իրաւական նորմերի ներկայութիւնը այն յօդուածներում, որոնք վերաբերում են ընտա, նկան իրաւունքին, մասամբ նաեւ ժառանգական, քրեական ու ընչական իրաւունքների մի քանի գէպերին: Սովորութեան իրաւունքի

ունեցած այդ տեսակ ազդեցութեան մասին խոստովանում է նաեւ ինքն Մխիթար Գօշը իր Գաղտաստանագրքի յօդուածներից մէկում. «Եւ եթէ ունէի յաղագս այդոցիկ այլ ինչ ըստ տեսութեան զնել մտայ՝ ոչ կամեայ զի մի ընդդէմ ինչ կարծիցեմ կանոնացս, այլ որ ոչ թուին ի կանոնաց՝ ի կենդանի առաք ձայնէ՛», Մի այլ տեղ, ուր Մխ. Գօշը խօսում է պատերազմական աւարի բաժանման իրաւունքի մասին, շեշտում է. «Զայս ըստ սովորութեան սացաք, զի ոչ է հրաման ի գործ»¹, Բաց ի այդ՝ Գաղտաստանագրքի Բ. մասի Ա. ընդարձակ յօդուածում, Մխ. Գօշը փորձում է կարգաւորել բազմաթիւ իրաւական երեւոյթները սկսած պետական իրաւունքից եւ վերջացած պատժական ու ընչական իրաւունքներով, ամբողջապէս հիմնուելով Հայաստանի սովորութեան իրաւունքի նորմերի վրայ, որոնք դարձելով զարգացել էին ու պահպանուել հայկական իրականութեան մէջ եւ կարգաւորել հասարակական յարաբերութիւնները տեղական իրաւաբանական աշխարհայեացքի գաղափարներով: Ի վերջոյ կարծում ենք, որ Մխ. Գօշը իր Գաղտաստանագրքի Նախադրութեան Ժ. զլխում յիշատակելով բնաւորական օրէնքները, իբրեւ աղբիւրներ, ենթադրում էր այնտեղ գտնել մասամբ սովորութեան իրաւունքի ներկայութիւնը, քանի որ նա բնաւորական օրէնքների վերաբերմամբ նաեւ այն իմաստն էր տածում, թէ օգտուում է օրէնքներից, «զուր ունէին նահայեացք Արաւհամ եւ այլքն առնչ էրոյ, զոր ունէին զնոյն եւ հետեանք»:

Արեւմտ թէեւ արտաքին բովանդակութեամբ Գաղտաստանագրքի յօդուածները շատ նուազ են պարունակում հայ սովորութեան իրաւունքի նորմերի ներկայութիւնը, սակայն վերջինները զգալի ծաւալով իրենց ազդեցութիւնն են ներգործել մեր հեղինակի վրայ, որ ստիպուած է եղել իր Գաղտաստանագրքի շատ յօդուածները խմագրել ժողովրդի մէջ տիրապետող ու միակ գործող գրական սովորութեան իրաւունքի ոգւով: Այլապիսով հայ սովորութեան իրաւունքը որոշ քափով խաղացել է իր դերը, որպէս Հայոց Գաղտաստանագրքի աղբիւր, մի իրաւաբանական աղբիւր, որ օւնէր զուտ ազգային ժողովրդական բնաւորութիւն, մի աղբիւր, որ տեղական կուլտուրահասարակական դարգացման արգասիք էր, նրա սոցիալ-

¹ Մխ. Գօշի Գաղտաստ. Մաս Ա, գլ. 26, էր. 188. հրատ. Վ. Ե. Վ. Բաղդատեանի):

² Մխ. Գօշի Գաղտ. Մաս Ա, գլ. 26, էր. 228:

³ Մխ. Գօշի Գաղտ. Մաս Բ, գլ. Ա, կր. 313:

պատմական զարգացման երեւոյթներից մէկը, եւ այդ սովորութեան իրաւունքի նորմերը ներմուծուել են Հայոց Կատաստանագրքի իրաւաբանական բովանդակութեան մէջ ու ազդել նրա յորինողի վրայ. մի կողմից՝ ուղղակի, անմիջապէս գործող զրաւան սովորութեան իրաւունքի շնորհիւ. միւս կողմից՝ անուղղակի, կողմնակի ճանապարհներով, այն է՝ Հայոց կանոնական իրաւունքի միջոցով, որ դարերի ընթացքում, քրիստոնէութեան առաջին օրերից սկսած հոգեւոր հայրերի ջանքերի շնորհիւ իր օրէնսդրական մարմինը, մանաւանդ ընտանեկան ու ժողովրդական իրաւունքի հարցերի վերաբերմամբ, յարմարեցւում էր ժողովրդական իրական պայմաններին ու խմբագրուում էին սովորութեան իրաւունքի ոգուն համաձայն:

(Հարստութիւն)

Ն. ՍԱՄՈՒԷԼՅԱՆ



ԹՂԹՈՅ ԳՐԻՔՆ ԶՈՒՆՔԻՆ ԵՒ ԶՈՒՆՔՈՒՆ ԹՂՄՆԱԿԸ

Չեռաբաց հաւաքմանց մէջ յաճախ տեսնուած մտածանքներէ մին է Թղթոց Գրիքն, ուր ամփոփուած կ'ըլլան բնդհանրապէս այլեւայլ անձանց պէսպէս առիթներու մէջ հասարակաց կամ անհատականներու խնդրաց նկատմամբ դրած Թղթերը: Ըստ հնուութեան ձեռագրերն եւ ըստ հանգամանաց դադափարողին շատ անգամ իրարու անձման կ'ելլեն մեր առջեւ բովանդակութեամբն այս Թղթոց իրէրէ: Այս կարգի մատենաներէն նշանաւոր են Անտոնեան Հարց Օրինակն, Էլմիսանի Մատենադարանի կրկին Չեռագրերն, Անտոնեան Մոկացոյ Գրիք Թղթոցն, Գր. Մադիստոսի Նամակները, Ն. Ընորհայրցի «Ընդհանրաբան» եւն, որոնցմէ ամենք հրատարակուած են ամբողջութեամբ եւ ամենք մասամբ: Վերջին ժամանակաց համար պէտք չէ մոռնալ Արծ. Գիւստ. Բ. Աղանդեանի Գրիքն Հայոց պատմա-նկարագրաւոր ժողովածոյնը, ուր ի մի ամփոփուած են ԹԼ—ԹԹ դարու հայ կաթողիկոսաց կնդակներն եւն: Ի հարկէ այս Գրիքը Թղթոցն, կամ նման յորըրջմամբ մատենաներէ դուրս ալ կը գտնուին շատ մը Թղթեր, որոնք կամ ձեռագիր կը մնան եւ կամ ցրիւ. հրատարակուած են պարբերական հանդէսներու մէջ: Հայագիտութեան մեծ ծառայութիւն է այս ամենք ժամանակագրորէն ընդարձակ հաւաքածոյի մէջ դասաւորուած ի լոյս ընծայել:

Թղթոց իրէր մեր մէջ շատ հին ժամանակներէ արդէն գոյութիւն ունին, ամենն ալ զուտ կրօնական բովանդակութեամբ: Արտական այն ան-

դադար վեճերն, որոնք Չ դարէն ի վեր տեսնոյին, շատ զեպքերու մէջ համոզեցին հայ վառականներն, որ հարկաւոր է յորթացս դարաց այսպիսի առթիւ գրուած Թղթերն իրեն առատաւարաւ նական հեղինակաւոր աղբիւրներ, թ մի ամփոփել եւ հասարակաց մատչելի ընել: Թ դարուն արդէն ծանօթ էին Ռիսանսի Գրիք Թղթոց անուան ներքեւ այլեւայլ ձեռագրերն (Ռիսա. Բ. 92), եւ Ռիսանսի յառաջ Թղթ. Պատմաբան, Մովսէս Կադանկեանի կ'օգտուէին նման հաւաքածոներէ: Բայց թէ երբ սկիզբ առին այսպիսի հաւաքածոներ եւ որուն ձեռագր, կարեւոր ինդիքներն են, որոնք կը կարտին մասնաւոր քննութեան:

Երանօթ Թղթոց իրէրէն հնագոյնն է առ այժմ Անտոնեան Հարց Օրինակն, որ ԹԳ դարէն (1298) է, Թովմայի գրէն: Թովմա, «ՉԱրաց հարցն պէսպէս եւ զանազան Թղթոց Գրիք», կամ «ՉԱ. Մատենա հաւաքեալ Թղթոց», ինչպէս կը գրէ ինքը (էջ 538), օրինական է անփոփոխ այն Օրինակին վրայն, զոր գտած է ի Հռոմէայէ. առկայն այն Օրինակն (= C), ուսկից ընդօրինակած է, ԹԳ դարէն (1271էն) շատ յառաջ չէր կրնար գրուած ըլլալ, վասն զի կը գտնուէին հին արդէն Կոստանդին Կաթողիկոսի (1221—1267), Վաղարշ Պատմիչի († 1271), Վանական Վարդապետի գրութիւնները: Այս Օրինակն (C) ալ ուղղակի կամ միջնորդութեամբ ծագած է ԹԱ դարու Օրինակէ մը (= B) որ Գրիգոր Բ. Վկայասիրի (1065—1105) սեպհականութիւնն էր: Ինչպէս կը տեսնուի էջ 219 գրուած Յիշատակարանէս. «Արինակ գրաց» որ լեալ էր Յէր Գրիգորսի Վկայասիրին՝ մինչեւ ցայս վայր էր. եւ նա այսպէս էր գրեալ. «Զավհամ որդի Գրիգոր Մագիստրոս յիշեալէք յաղօթս ձեր, ով երջանիկ դառն ուղղափառաց խմբիցք աղանդեան սեպի: Ընի թուական» (= 1077): Այս ծանօթութեամբ C օրինակին դադարաբանը ուզած է իմացնել յետին ներուս թէ իւր առջեւի Օրինակն (B) հոս աւարտելով, յաշիւղներն ինքն կը յաւելու այլեւայլ տեղերէ ժողովելով: Ըստ գրայի է այս եւ գիրտայիսի համադրիք, եթէ է քննական ունեւոր մ'առնակնէր 219 իջէն յառաջ եւ յետոյ դասաւոր Թղթոց վրայ: Մինչ հոն առանձին խոսանք գտնուած մէն մի Թուղթ՝ ժամանակագրորէն կը յաշիւղէ իրարու Ե—Է դարուց Թղթակցութիւնը, հոս հայառապէս խառնակոյտ մ'է ամենայն ինչ. չկայ ժամանակագրական կարգ. չկայ ամէն եւ անձի խորութիւն, հարազատ կամ անհարազատ թշուրթոյ ընտրութիւն եւն: Է դարու առաջին տասնեակէն ստուած կ'ըլլուի Է դարու, եւ ի մէջ կը բերուի Եովհաննա Խանասարի ընտրուած անհարազատ պատմութիւնն Մանագիւրտի 726թ ժողովոյն: Քիչ վերջը կու գայ Եովհ. Մանագիւրտի Վաղարշ Մատենա մէջ հաւաքածոյ, սակայ եղեւորաբան թահապապեանն առ նետար թուղթն, Պետրոսի եւ Անկայ Թղթակցութիւնն եւն: Ար պակսին շատ մը Թղթեր, որ այլուստ ծանօթ են,

1 Հրա. Յօդին 1801, 8⁰ էջ 6 ԺԷ+584:

2 Հմմտ. Հմմտ. Ե. Բ. 1908, էջ 361—85: